



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայցորդ, ՀՊՏՀ ԳՄ

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. ընդհանրական ցուցանիշներ, նորարարական ներուժի մեծություն, ռեսուրսային բլոկներ, գործոններ, ենթացուցանիշներ

Պրակտիկ գնահատումների փորձը ցույց է տալիս, որ այսօր փնտրեսական համակարգում նորարարական ներուժի գնահատման միասնական մեթոդաբանություն գոյություն չունի: Միջազգային փորձում, որպես կանոն, գնահատումները հիմնված են համեմատական վերլուծությունների և միջազգային չափորոշիչների վրա: Առավել լայն տարածում ունեն ազգային ինվազիոն (նորարարական) համակարգի տարրերի փոխազդեցության վերլուծության մեթոդները: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ երկրների խմբերում նորարարական ներուժը գնահատելու համար օգտագործվում են կլաստերային վերլուծության որոշակի մոթոդներ:

Գնահատումների փորձը ցույց է տալիս, որ այսօր տնտեսական համակարգում նորարարական ներուժի գնահատման միասնական մեթոդաբանություն գոյություն չունի: Միջազգային պրակտիկայում, որպես կանոն, գնահատումները հիմնված են համեմատական վերլուծությունների և միջազգային չափորոշիչների վրա:

Առավել լայն տարածում են ունեն ազգային ինվազիոն համակարգի տարրերի փոխազդեցության վերլուծության մեթոդները: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ երկրների խմբերում նորարարական ներուժը գնահատելու համար օգտագործվում են կլաստերային վերլուծության որոշակի հնարավորություններ:

Առանձին երկրների զարգացման մակարդակի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով միջազգային կազմակերպություններն օգտագործում են համախմբված՝ ընդհանրական ցուցանիշներ, որոնք կշռված և համակցված են՝ հիմնված տարբեր գնահատումների լայն շրջանակների վրա: Իրականացվող հետազոտություններից մեծամասնությամբ մեծ կիրառություն են ստացել գնահատման ինտեգրալային մոտեցումները: Առավել ուշագրավ է Գ. Ի. Ժիցի կողմից առաջարկվող գնահատման այլընտրանքային մոտեցումը, ըստ որի նորարարական ներուժի մեծությունը գործակից է, որը տատանվում է 0-ից մինչև 1 միջակայքում՝ արտահայտված հետևյալ բանաձևով.

$$P_s^i = \frac{R_i}{R_0} \times \frac{N_i}{N_0}$$

որտեղ՝ P- ն նորարարական ներուժի մեծությունն է,

R_i - օգտագործվող ռեսուրսների (մասնավորապես՝ այն ռեսուրսների, որոնք կարող ենք համարել նորարարություններ) գումարն է,

RO - գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների ընդհանուր արժեքն է,
 Ni - արտահանվող նորարարությունների գումարն է, (արժեքը),
 NO - արտադրված արտադրանքի ընդհանուր քանակն է, (արժեքը):

Մեկ այլ մոտեցմամբ, երկրի նորարարական ներուժի ցուցանիշը հաշվարկվում է միայն մեկ ցուցանիշի հիման վրա: Ըստ Ա.Ա. Չուբի՝ նման ցուցանիշի ընտրության արդյունավետությունը պայմանավորված է բազմաֆունկցիոնալ կոռելացված-ռեգրեսային վերլուծությունների կիրառմամբ: Այն ներառում է հետևյալ գործոնների խումբը՝

- հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների թիվը,
- հետազոտությունների և մշակումների ոլորտում զբաղված աշխատողների քանակը,
- հետազոտությունների և մշակումների ոլորտում կատարված ներքին ծախսերը,
- ստեղծված առաջադեմ տեխնոլոգիաների թիվը,
- օգտագործված առաջադեմ տեխնոլոգիաների քանակը.
- կազմակերպությունների նորարարական ակտիվությունը,
- տեխնոլոգիական նորարարությունների համար անհրաժեշտ ծախսերը,
- նորարարական ապրանքների, ծառայությունների ծավալը:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ տարածաշրջանում ստեղծված նորարարությունները ունեն ամենաուժեղ ազդեցությունը նորարարական ներուժի զարգացման դինամիկայի վրա: Հետևաբար՝ այս գործոնը պետք է օգտագործվի նորարարական ներուժի ինդեքսը հաշվարկելու համար.

$$K_{HH} = \frac{(k_{ij} - \min k_{ij})}{(\max k_{ij} - \min k_{ij})}$$

Որպես նորարարական ներուժի ենթապոտենցիալների ուսումնասիրություն, Տիշկովի կարծիքով, նորարարությունների գնահատումը ենթադրում է ֆինանսական, տնտեսական, գիտական, կրթական ներուժները բնութագրող ցուցանիշների շարքի ուսումնասիրություն:

Այս մոտեցման զգալի անբավարարությունը տարածաշրջանի նորարարության թույլ գնահատականն է: Մասնավորապես՝ հաշվի չի առնվում ինովացիոն գործունեության հիմնական ցուցանիշներից մեկը՝ ձեռնարկությունների նորարարական գործունեության մակարդակը: Բացի այդ, ուսումնասիրությունների մակարդակից դուրս է մնում նորարարական ոլորտում տեխնոլոգիական բաղադրիչը: Այս տեսանկյունից, առավել հատկանշական է Ն.Պ. Սավետովայի մոտեցումը, ով առանձնացնում է երկրի նորարարական ներուժի գնահատման հետևյալ բաղադրիչները՝

- մտավոր և մասնագիտական ներուժ,
- կազմակերպչական և կառավարման ներուժ,
- տեխնիկական և տեխնոլոգիական ներուժ,
- ֆինանսական և արտադրական ներուժ:

Հեղինակն առաջարկում է դիտարկել ֆինանսական ներուժն այնպիսի ցուցանիշների միավորմամբ, ինչպիսիք են տնտեսության մեկ աշխատողի համար հիմնական միջոց-

ների ներդրումները և հիմնական միջոցների արժեզրկման մակարդակը: Չնայած ընտրված մեթոդաբանությունների ակնհայտ առավելություններին, մեր կարծիքով, նորարարական ներուժի հաշվարկումը նմանօրինակ մեթոդներով ունի որոշակի թերություններ: Մասնավորապես՝ հիմնական միջոցների արժեզրկման աստիճանը առավել նպատակահարմար է տեխնիկատեխնոլոգիական ներուժը բնութագրելու համար: Բացի այդ, գիտական ներուժը անհրաժեշտ է ուսումնասիրել որպես առանձին բաղադրիչ:

Նորարարական ներուժի գնահատման հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում: Ներկայացված ռեսուրսային բլոկների միավորման արդյունքում ստացված գնահատականները առավել արժանահավատ են և հնարավորություն են տալիս կատարելու ոչ միայն ընդհանրական, այլև նորարարական ներուժի մասնակի գնահատումներ:

Աղյուսակ 1

Ռեսուրսային բլոկների միավորման արդյունքում ստացված գնահատականները

Նորարարական ներուժը բնութագրող ցուցանիշներ	Գործոններ, ենթացուցանիշներ, մասնակի գործակիցներ
<p>Մարդկային ներուժ</p> $M = \frac{\sum_{i=1}^n M_i}{n}$	<p>M₁ - հետազոտությունների և մշակումների ոլորտում զբաղվածների թվի հարաբերություն ողջ աշխատուժի թվին՝ արտահայտված (%) ներով</p> <p>M₂ - ակադեմիական աստիճան ունեցող հետազոտողների թվաքանակի և ընդհանուր հետազոտողների ընդհանուր թվաքանակի հարաբերություն (%)</p> <p>M₃ - 10,000 բնակչին բաժին ընկնող ուսանողների թվաքանակ</p>
<p>Գիտական ներուժ</p> $G = \frac{\sum_{i=1}^n G_i}{n}$	<p>G₁ - գիտահետազոտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների թվի հարաբերությունն ընդհանուր ձեռնարկությունների և կազմակերպությունների թվաքանակին՝ արտահայտված (%) -ներով</p> <p>G₂ - տրամադրված արտոնագրերի քանակ (հատ)</p> <p>G₃ - տրամադրված արտոնագրերի թվաքանակի հարաբերություն հայտ ներկայացրած արտոնագրերի թվաքանակին՝ արտահայտված (%) -ներով</p> <p>G₄ - ստեղծված առաջադեմ տեխնոլոգիաների քանակ, (հատ)</p>
<p>Տեխնիկատեխնոլոգիական ներուժ</p> $SSL = \frac{\sum_{i=1}^n SSL_i}{n}$	<p>SSL₁ - կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում տեխնոլոգիական նորարարություններ իրականացնող կազմակերպությունների բաժին, (%)</p> <p>SSL₂ - օգտագործված առաջադեմ տեխնոլոգիաներ</p> <p>SSL₃ - հիմնական արտադրական ֆոնդերի արժեքի հարաբերություն տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակին, (%)</p> <p>SSL₄ - հիմնական միջոցների արժեզրկման աստիճան, (%)</p>
<p>Արդյունաբերաարտարական ներուժ</p> $AA = \frac{\sum_{i=1}^n AA_i}{n}$	<p>AA₁ - արտահանվող ապրանքների, ծառայությունների հարաբերակցություն տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին (%)</p> <p>AA₂ - արտահանվող ապրանքների, ծառայությունների ընդհանուր ծավալում նորարարական ապրանքների, ծառայությունների մասնաբաժին (%)</p> <p>AA₃ - արտահանվող նորարարական ապրանքների, ծառայությունների ծավալի և ՀՆԱ հարաբերակցություն, (%)</p> <p>AA₄ - արդյունաբերական արտադրանքի ինդեքս (%)</p>

Ֆինանսարևեսական ներուժ $ՖՏԼ = \frac{\sum_{i=1}^n \text{ՖՏԼ}_i}{n}$	ՖՏԼ ₁ - տեխնոլոգիական նորարարություններ - ՀՆԱ հարաբերություն (%)
	ՖՏԼ ₂ - հետազոտություններ և մշակումներ - ՀՆԱ հարաբերություն (%)
	ՖՏԼ ₃ - 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ (%)
Ներդրումային ներուժ $ՆԼ = \frac{\sum_{i=1}^n \text{ՆԼ}_i}{n}$	ՆԼ ₁ - մեկ շնչի հաշվով հիմնական կապիտալի ներդրումներ, (արտահ. արժույթով)
	ՆԼ ₂ - ընդհ. կապիտալի մեջ ֆիզիկական կապիտալի բաժին (%)
	ՆԼ ₃ - օտարերկրյա ներդրումների ծավալ (հազար ԱՄՆ դոլար)
Տեղեկարվական կոմունիկացիոն ներուժ $ՏԿԼ = \frac{\sum_{i=1}^n \text{ՏԿԼ}_i}{n}$	ՏԿԼ ₁ - ուսումնասիրված կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ օգտագործող կազմակերպությունների տեսակարար կշիռ (%)
	ՏԿԼ ₂ - հետազոտված կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում համաշխարհային տեղեկատվական ցանցերից օգտվող կազմակերպությունների համամասնություն (%)
	ՏԿԼ ₃ - յուրաք. 100 աշխ. բաժին ընկնող անհ. համակարգիչների թիվ

АРМИНЕ АРУТЮНЯН

О МЕТОДОЛОГИЧЕСКИХ ВОПРОСАХ ОЦЕНКИ ИННОВАЦИОННОГО ПОТЕНЦИАЛА

Ключевые слова: общие показатели, стоимость инновационного потенциала, блоки ресурсов, факторы, показатели

Как показывает практика, нет единой методологии оценки инновационного потенциала в экономической системе. В международной практике, как правило, оценки основаны на сравнительном анализе и международных стандартах. Широко используются методы взаимодействия элементов национальной инновационной системы. Ключевой особенностью является то, что для оценки инновационного потенциала используются некоторые возможности кластерного анализа.

ARMINE HARUTYUNYAN

METHODOLOGICAL ISSUES OF INNOVATIVE POTENTIAL ASSESSMENT

Key words: general indicators, the value of innovative potential, resource blocks, factors, Indicators

As the practice assessment shows there is no single methodology for evaluating innovative potential in the economic system today. In international levels, as a rule, assessments are based on comparative analyzes and international standards. Widely used the methods of interaction of elements national innovation system. The key feature is that some cluster analysis options are used to assess innovative potential in groups of countries.